# ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ

## ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1990-1991 ԹԹ. ԻՐԱՔԱ -ՔՈՒՎԵՅԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՆԴԵՊ

Միջարաբական հարաբերությունների իրավիճակը զգալիորեն կախված է Եգիպտոսի և Իրաքի միջև գոյություն ունեցող առնչությունների բնույթից, ինչը պայմանավորված է արաբական աշխարհում նրանց ունեցած դերի ու հեղինակության հետ[1]: Երկու երկրների միջև գոյություն ունեցող մրցակցության հետևանքով հարաբերությունները նրանց միջև միշտ չէ որ հարթ են ընթացել:

1980-ականների վերջին Եգիպտոսը՝ նախագահ Մուհամմեդ Հոսնի Մուբարաքի նախագահության երկրորդ շրջանում, վերականգնելով 1979թ. կասեցված իր անդամակցությունը Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությունում (ԻԿԿ) և Արաբական Պետությունների Լիգայում (ԱՊԼ), կրկին դարձել էր «արաբական ընտանիքի» լիիրավ անդամ[2]: Բայց որպեսզի Կահիրեն դարձյալ հաստատի և ամրապնդի իր դիրքերը արաբական աշխարհում ու վճռորոշ ձայն ունենա, հարկավոր էր ինչ-որ ցնցում դրսից, որն էլ հանդիսացավ Ծոցի երկրորդ ճգնաժամը[3]: Այն մեծապես նպաստեց Եգիպտոսի քաղաքականության ուրույն դերի վերարժևորմանը տարածաշրջանում: Ավարտելով իրաքա-իրանյան պատերազմը, Մերձավոր Արևելքում նոր քաղաքական դեմքով ներկայացել էր Իրաքը: Տիրապետելով մարտերում կուտակված 1մլն բանակի, քիմիական և այլ կարգի կուտակված ահռելի քանակությամբ սպառազինության[4], Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը, ձգտում էր առաջնորդի դեր կատարել արաբական աշխարհում[5]: Եթե հավատանք աղբյուրներին, ապա 1982-1990 թթ. ընթացքում Իրաքը ներ էր կրել ավելի քան 14 մլրդ. դոլարի զենք, որի արդյունքում Բաղդադը աշխարհում զենք ներկրողների շարքում զբաղեցրել էր առաջին տեղը[6]: Իր քաղաքական նկրտումները իրականացնելու համար՝ Սադդամ Հուսեյնը 1989թ. փետրվարի 16-ին հիմնել էր Արաբական Համագործակցության Դաշինքը՝ Եգիպտոսի, Ի-

բաքի, Եմենի և Հորդանանի մասնակցությամբ: Այն նպատակ ուներ առաջին հերթին Մերձավոր Արևելքում ուժային նոր հավասարակշռություն ստեղծել ի հակակշիռ Դամասկոսի և առ-Ռիադի: Հետագայում Եգիպտոսը աստիճանաբար սահմանազատվեց Սադդամ Հուսեյնից, ինչի արդյունքում ձևավորվեց Կահիրե-առ-Ռիադ-Դամասկոս նոր համագործակցության շրջանակը՝ Բաղդադին դիմակայելու համար[7]:

Հայտնի էր, որ վերջին տասնամյակներին Կահիրե-Բաղդադ-Դամասկոս շրջանակներում երբեք չի եղել ներդաշնակություն: Այսպես, օրինակ, ութ տարի տևողությամբ իրաքա-իրանյան պատերազմի ընթացքում Դամասկոսը բացահայտ դիմակայում էր Բաղդադին, որն էլ իր հերթին վայելում էր Կահիրեի աջակցությունը[8]:

1990թ. փետրվարին Ամմանում ԱՀԴ անդամ պետությունների ղեկավարների հանդիպմանը, Սադդամը խնդրել էր Հորդանանի թագավոր Հուսեյնին և Եգիպտոսի նախագահ Մուբարաքին հայտնել Ծոցի երկրներին, որ Իրաքը պահանջում էր նրանցից ոչ միայն մարել իրաքա-իրանյան պատերազմի տարիներին իր կուտակած պարտքերը, այլ նաև անհապաղ տրամադրել 30 մլրդ դոլար[9]: Իրաքի նախագահը սպառնում էր գումարը չտրամադրելու դեպքում՝ դիմել այլ միջոցների: 1990թ. հուլիսի 15-ին Իրաքի արտաքին գործերի նախարար Թարիք Ազիզը հուշագիր է ուղարկում ԱՊԼ գլխավոր քարտուղարի, որտեղ Իրաքի կողմից մեղադրանքներ էին հնչում Քուվեյթի հասցեին[10]: Նշվում էր, որ Քուվեյթը, օգտվելով Իրաքի Իրանի դեմ պատերազմելու հանգամանքից, իր ռազմական կառույցները, նավթային արդյունաբերական ձեռնարկությունները տեղակայել էր իրաքյան սահմանամերձ տարածքներում: Քուվեյթը, ինչպես նաև Միացյալ Արաբական Էմիրությունները, մեղադրվում էին համաշխարհային շուկաներում նաֆթային դեմպինգի մեջ: Այդ ամենի արդյունքում, ըստ իրաքյան իշխանությունների 1981-1990թթ. ընթացքում Բաղդադը կորցրել էր 89 մլրդ դոլար: Քուվեյթը մեղադրվում էր նաև Իրաքի հարավային շրջաններում՝ Ռումելիայի նավթահանքերի անօրինական շահագործման մեջ, որտեղից վերջինս 1981-1990թթ. ընթացքում արտահանել էր մի քանի տասնյակ միլիարդ դոլարի արժողության նավթ: Իրաքը պահանջում էր փոխհատուցել այդ կրած վնասը և մշակել արաբական օգնության հատուկ ծրագիր (Մարշալի ծրագրի նմանությամբ), որպեսզի Իրաքը կարողանա դուրս գալ տնտեսական ծանր վիճակից[11]: Քուվեյթը Ծոցի Երկրների Համագործակցության Դաշինքի մնացած անդամ-պետությունների հետ միասին քննադատել էր իրաքյան անհիմն մեղադրանքները, թեպետ առաջարկվել էր ԱՊԼ շրջանակներում հատուկ հանձնաժողով կազմել, որը պետք է զբաղվեր իրաքա-քուվեյթյան վիճելի սահմանների դեմարկացիայի հարցով[12]: Երբ Իրաքում հակաքուվեյթյան քարոզչությունը հասել էր իր կիզակետին, 1990թ. հու-

լիսի 26-ին Մուբարաքը միջնորդության նախաձեռնությամբ ժամանել էր Բաղդադ[13]: Սակայն եգիպտական միջնորդական նախաձեռնությունը ձախողվեց: Արաբական աշխարհում նախապես տպավորություն ստեղծելով, թե իր քայլը ուղղված է պաղեստինյան խնդրի կարգավորման գործին*, 1990թ. օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը Իրաքյան 150.000-անոց զորամիավորումներ խուժեց հարևան անկախ Քուվեյթ և ամբողջովին գրավեց այն[14]: 20.000-անոց քուվեյթյան բանակը չէր կարող դիմակայել և գլխովին ջախջախվեց, իսկ պետության ղեկավարները ապաստան գտան Սաուդյան Արաբիայում: Քուվեյթի գրավումը անակնկալ էր և այն ցնցեց ոչ միայն արաբական այլ նաև ողջ աշխարհը:

1990 թ. հուլիսին գրանցված տվյալների համաձայն Իրաքի պարտքերը արդյունաբերական զարգացած երկրներին կազմել էին ավելի քան 40 միլրդ դոլար, նույն քանակության պարտք էլ գրանցվել էր արաբական երկրներին[15]: Արդեն օգոստոսի 7-ին, ի պատասխան Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի խնդրանքի ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հրաման էր տվել Սաուդյան Արաբիայի արևելյան նահանգ ամերիկյան զորամիավորումներ տեղափոխելու մասին[16]: Ջորջ Բուշի հրամանի նախօրեին ՊԱԿ-ի նախագահը անմիջապես ժամանել էր Եգիպտոս՝ Մուբարաքին համոզելու շրջանցել և հնարավորության դեպքում կանխել ԱՄՆ-ի կողմից նախաձեռնվող հակաիրաքյան ռազմական գործողությունները: Սակայն Մուբարաքը հայտնել էր Արաֆաթին, որ Սադդամը չափից ավելի մեծ հարված էր հասցրել արաբների հեղինակությանը[17]: Սպառելով դիվանագիտական ճանապարհով խնդիրը լուծելու հնարավորությունները,* 1990թ. օգոստոսի 10-ին ԱՊԼ անդամ պետությունների արտահերթ գագաթաժողովի նիստին Մուբարաքը առաջ քաշեց եգիպտա-սաուդյան Իրաքին դատապարտող և հակաիրաքյան ռազմական կոալիցիային մասնակցելու կոչ անող բանաձևը[18]: ԱՊԼ 22 անդամներից (ՊԱԿ-ի հետ միասին) 12-ը միայն միացան Եգիպտոսի կողմից առաջադրված բանաձևին: Զորքեր ուղարկեցին Մարոկոն, Եգիպտոսը, Սիրիան և Սաուդյան Արաբիան: Սակայն հետագա ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն ունեցան Եգիպտոսի (35.000 զինվոր), Սիրիայի և Սաուդյան Արարիայի զորամիավորումները: Հարկ է նշել, որ Կահիրեի կողմից ուղարկված զորքերը միջազգային կոալիցիայում զբաղեցնում էին իրենց քանակով երկրորդ տեղը ամերիկյանից հետո:

Արդարացի լինելու համար նշենք, որ Մուբարաքի նման դիրքորոշումը պայմանավորված էր Սադդամ Հուսեյնի «անսասան» քաղաքական ուղեգծով և երբ խնդիրը լոկալ բնույթից վերածվեց միջազգայինի եգիպտա-սիրիական զորքերի մասնակցությունը կոալիցիային պետք է ապահովեին նրանում արաբական տարրը և Իրաքի ակնկալվող պարտության դեպքում թույլ չտային նրա մասնատումը:

Անկարող լինելով լուծել ճգնաժամը մեկ ընդհանուր հայտարարի շուրջ՝ արաբական աշխարհը բաժանվեց երեք ճակատի.

1. Ծոցի երկրները, Եգիպտոսը և Սիրիան պաշտպանեցին Քուվեյթին;

2. Հորդանանը, Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությունը (ՊԱԿ), Եմենը, Սուդանը և Մավրիտանիան հանդես եկան Իրաքի պաշտպանությամբ՝ կոչ անելով Բաղդադին Քուվեյթի հարստությունը բաժանել արաբական պետությունների միջև;

3. Մադրիբի պետությունները՝ Մարոկկոն, Թունիսը, Ալժիրը և Լիբիան կոչ արեցին ճգնաժամը լուծել արաբական ուժերով և թույլ չտալ օտարերկրյա միջամտությանը[19]:

Արաբական երկրներից յուրաքանչյուրը իր դիրքորոշումը Ծոցի երկրորդ ճգնաժամի հանդեպ որդեգրում էր ելնելով իր համար արտաքին և ներքին քաղաքական գործոնների մանրամասն հաշվարկից: Արաբական ղեկավարների դիրքորոշման հարցում մեծ դեր խաղացին նաև ժամանակին միմյանց հասցրած վիրավորանքները և քաղաքական այս կամ այն հարցում անբավարարվածությունը, ձգտումը «չեզոքացնել, մեկուսացնել» հակառակորդին: Մուբարաքը վրդովված էր Սադդամի ուխտադրույժ քաղաքականությունից և արաբական աշխարհում իր հեղինակությանը հասցրած բարոյահոգեբանական հարվածից: Աբաֆաթը զգտում էր կանխել Մերձավոր Արևելքում նոր հակամարտության բռնկումը, ինչը երկրորդական կդարձներ պաղեստինա-իսրայելյան խնդրի լուծումը: Վերջինս ենթադրում էր, որ արաբների և Սադդամի միջև հաշտության եզրեր գտնելու իր միջնորդությունը կնպաստի ՊԱԿ-ի հեղինակության բարձրացմանը: Գոյություն ունեին ներքաղաքական պատճառներ: Օրինակ, Հորդանանում բնակվում էին ավելի քան 1 մլն. պաղեստինցիներ, որոնք պատրաստ էին զենքը ձեռքին սատարել Սադդամին: Ճգնաժամը լուրջ փորձության առջև դրեց ոչ միայն եգիպտա-արաբական, այլ նաև եգիպտա-ամերիկյան հարաբերությունները: Ստեղծված բարդ իրադրության մասին է վկայում 1991թ. Մուբարաքի կողմից արված հայտարարությունը, որ «Ծոցի ճգնաժամը իմ նախագահության ամենադժվար շրջանն էր»[20]: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս երկու պետություններին, ապա Թուրքիան միացավ ԱՄՆ-ի նախաձեռնություններին, իսկ Իրանը սատարեց Իրաքին: 1990թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցած ՍԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 15 անդամ-պետությունների արտաքին գործերի նախարարների նիստին ընդունվել էր 678-րդ բանաձևը, որին կողեմ էին քվեարկել նիստի մասնակիցներից 12-ը՝ Եմենը և Կուբան քվեարկել էին դեմ, Իսկ Չինաստանը՝ մնացել էր ձեռնպահ: ԱԽ 678-րդ բանաձևը Իրաքին զգուշացնում էր, որ եթե նա մինչև 1991թ. հունվարի կեսը չհեռանա Քուվեյթից, ապա ԱԽ կհանձնա-

բարեր իր անդամ-պետությունների ձեռնարկել միջոցներ ՄԱԿ-ի ԱԽ 660-րդ և դրան հաջորդած բոլոր բանաձևերը կյանքի կոչել՝ տարածաշրջանում անվտանգություն ու խաղաղություն հաստատելու համար[21]:

1991թ. հունվարի 16-ին Իրաքի դեմ ռազմական գործողությունների նախօրեին Մուբարաքը կրկին անգամ դիմել էր Հուսեյնին կոչ անելով «ապավինել բանականության ձայնին և թույլ չտալ հարվածել Բաղդադին»[22]: Գրեթե վեց ամիս տևած Քուվեյթի բռնազավթման ընթացքում իրաքյան վարչակարգը մերժում էր խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր փորձերն ու նախաձեռնությունները: 42 օր տևողությամբ պատերազմը ավարտվեց Իրաքի ռազմական ներուժի 70-80% ոչնչացմամբ և երկրի քիմիական զենքի և այլ կարգի ստրատեգիական կարևորություն ունեցող կենտրոնների վերացմամբ: Իրաքում աշխատող ՄԱԿ-ի փորձագետները 1991 թ, աշնանը եկան այն համոզման, որ Սադդամի վարչակարգին միջուկային զենքի ստեղծումից բաժանում էր ընդամենը երկու տարի[23]: Իրաքը կորցրեց նաև իր հեղինակավոր դիրքերը մի շարք միջազգային կազմակերպություններում և վարկաբեկվեց: Փետրվարի 26-ին Հուսեյնը հայտարարեց, որ ընդունում է ՄԱԿ-ի ԱԽ-ի բոլոր 12 բանաձևերը[24]: Բաղդադը պարտավորվել էր փոխհատուցել Քուվեյթին հասցրած վնասը և ազատ արձակել միջազգային հակահիրաքյան կոսղիցիայի անդամ-պետությունների քաղաքացիներին, որոնք իբրև պատանդ մնացել էին Իրաքում[25]: 1991թ. փետրվարի վերջին Քուվեյթում գտնվող իրաքյան զորքերի մնացած մասը դուրս եկավ երկրից: Եգիպտոսի դիրքորոշման արդյունքում տարածաշրջանում ուժային նոր հավասարակշռություն ստեղծվեց, որը սկսեց գլխավորել Կահիրեն: Պատերազմից արաբական ոչ մի պետություն այդքան ձեռքբերումներ չունեցավ, որքան Եգիպտոսը:

1992թ. սեպտեմբերին Մուբարաքը հայտարարել էր, որ «Միջազգային կոալիցիային մասնակցությունը թույլ տվեց մեզ ձեռք բերել երկրի տնտեսության զարգացմանը խթանող անհրաժեշտ ներդրումները»[26]: Մուբարաքը ի սկզբանե գտնվեց հաղթողների շարքում, ինչը վերջին շրջանում քիչ էր հաջողվում արաբական առաջնորդներին: Այդ հանգամանքը բարձրացրել էր նախագահի հեղինակությունը համերկրացիների աչքերում, ինչի արդյունքում 1993թ. նա երրորդ անգամ ընտրվեց իր պաշտոնին: Իրաքի սարսափից ահաբեկված պետությունների պաշտպանության արդյունքում 1991թ. գարնանը ԱՊԼ նստավայր-գրասենյակը կրկին տեղափոխվեց Կահիրե, իսկ Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Իսմաթ Աբդ ալ-Մագիդը նշանակվեց լիգայի գլխավոր քարտուղարի պաշտոնին[26]: Նույն 1991թ. Եգիպտոսի վարչապետի տեղակալ Բուտրոս Բուտրոս Ղալին ընտրվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար: 1991թ. օգոստոսին ԻԿԿ արտգործնախարարների Ստամբուլի կոնֆերանսում

ունեցած ելույթում Եգիպտոսի ԱԳ նախարար Ամր Մուսան նշեց, որ Քուվեյթի բռնազավթումը անակնկալ էր իսլամական պետությունների համար և «այն սպառնում էր տարածաշրջանում անվտանգությանը, կայունությանն ու համերաշխությանը»[27]: Միջազգային կոալիցիային մասնակցությունը ապահովեց Եգիպտոսին մի շարք տնտեսական ձեռքբերումներ:

ԱՄՆ-ն մարեց Եգիպտոսի ռազմական պարտքի 6,7մլրդ. դոլար գումարը[28]: Այնուհետև, 1979թ.-ից Եգիպտոսին ԱՄՆ-ի կողմից անվերադարձ տրամադրվող գումարի ընդհանուր չափը 1998թ. պետք է հասներ 22 մլրդ. դոլարի[29]: Վարկեր տրամադրող «փարիզյան ակումբը» մարեց Եգիպտոսի 50 մլրդ. դոլար արտաքին պարտքի 50%-ը, իսկ Միջազգային Առժույթային Հիմնադրամը մշակեց Եգիպտոսին վարկերի տրամադրման հատուկ համակարգային ծրագիր երկրի տնտեսության վերակառուցման համար: Ծոցի ճգնաժամը փորձության առջև էր կանգնեցրել եգիպտա-ամերիկյան հարաբերությունները, որին Մուբարաքը մեծ տեղ էր հատկացնում՝ մանավանդ, երբ ԽՍՀՄ-ը գտնվում էր իր քաղաքական մայրամուտում: Սակայն, միանալով միջազգային հակահիրաքյան կոալիցիային, Եգիպտոսը ոչ միայն պահպանեց, այլ նաև ամրապնդեց երկկողմ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որն իր արտացոլումը գտավ «եգիպտա-ամերիկյան համագործակցության և համընդհանուր շահերի պահպանման մասին՝ 1998թ. հուլիսին հրապարակված ամերիկա-եգիպտական հռչակագրում»[30]: Արևելագետ Դ.Կլաբկը գտնում է, որ Ծոցի երկրորդ պատերազմից հետո Եգիպտոսի դերը ԱՄՆ-ի քաղաքականությունում չափազանց կարևոր էր դարձել և ղեկավար շրջանների կողմից որոշում էր ընդունվել այն ավելի ընդարձակել ու ամրապնդել[31]: Հարկավոր է փաստել, որ առանց Եգիպտոսի աջակցության ԱՄՆ-ի գլխավորած միջազգային հակահիրքյան կոալիցիայի ռազմական գործողությունները կդժվարանային, քանի որ քաղաքական տեսանկյունից նրանում կբացակայեր արաբական տարրի մասնակցությունը: Գտնվելով հաղթողների շարքերում՝ Կահիրեն իրեն համարելով պաղեստինյան խնդրի լուծմանը կոչված տարածաշրջանի հիմնական պետություն կարողացավ վերսկսել խաղաղության գործընթացը Մերձավոր Արևելքում, որի անմիջական ապացույցը եղավ 1991թ. հոկտեմբերի 30-ին մեկնարկած Մադրիդի խաղաղության կոնֆերանսը, որը կոչված էր լուծել արաբա-իսրայելյան հակամարտությունը հիմնվելով ՍԱԿ-ի ԱԽ 242-րդ և 338-րդ բանաձևերի վրա[32]: Ծոցում պատերազմի ավարտից հետո, ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը ելույթ ունենալով կոնգրեսի նիստին ընդգծեց, որ «եկել է այն ժամանակը, երբ պետք է լրջորեն զբաղվել խնդիրների կարգավորմամբ Մերձավոր Արևելքում և վերջակետ դնել արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացում»[33]: Արևելագետ Ու. Քո-

ւանդը այդ կապակցությամբ նշել է, որ պատերազմը վերջապես ոեալ հնարավորություն ստեղծեց արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջխաղացման հասնելու գործում (այդ խոսքերը գրվել են «Փոթորիկ անապատում» հակահիրաքյան ռազմական օպերացիայից անմիջապես հետո)[34]: Մուբարաքը մեծ դեր խաղաց նաև Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության և նրա նախագահ Յասեր Արաֆաթի համբավի վերականգնման գործում, քանի որ վերջինս քուվեյթյան ճգնաժամի հանդեպ իր դիրքորոշման արդյունքում դատապարտվել էր ոչ միայն արաբական ղեկավարների, այլ նաև միջազգային հանրության կողմից[35]: Եգիպտոսի և Սիրիայի հակահիրաքյան դիրքորոշումը նպաստեց երկուս երկրների միջև «անհանդուրժողականության» խոչընդոտի վերացմանը: Դամասկոսը կարողացավ նաև ընդլայնել համագործակցությունը Արևմուտքի հետ: Որպեսզի կանխարգելեն հետագա նման ճգնաժամային իրավիճակների ի հայտ գալը և ապահովեն տարածաշրջանում պատերազմից հետո անվտանգությունն ու կայունությունը Եգիպտոսը 7 արաբական երկրների հետ (Սիրիա, Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Օման, Կատար, Բահրեին, Միացյալ Արաբական Էմիրություններ) 1991թ. մարտին ստորագրեցին «Դամասկոսի հռչակագիրը»[36]: Այն նոր հիմքերի վրա դրեց Եգիպտոսի, Սիրիայի և Ծոցի երկրների միջև համագործակցությունը՝ ապահովելով Կահիրեի դիրքերի ամրացումը այդ հարաբերություններում: «Դամասկոսի հռչակագիրը»՝ Մերձավոր Արևելքում կոլեկտիվ անվտանգության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր ձեռքբերում էր Կահիրեի համար: Ստեղծված ուժային նոր հարաբերակցության պայմաններում՝ Եգիպտոսը ստանձնում էր արաբական երկրների անվտանգությունը ապահովելու կարևորագույն դերը:

Ամփոփելով վերը շարադրվածը, անհրաժեշտ է փաստել, որ Եգիպտոսի նախագահի Իրաք-Քուվեյթյան ճգնաժամի ընթացքում դրսևորած ճկուն և հեռատես դիվանագիտության արդյունքում, Կահիրեն ամբողջովին վերականգնեց իր առաջատար դերը արաբական աշխարհում: Մինչդեռ 10 տարի առաջ անգամ ամենալավատես Եգիպտացի քաղաքագետները չէին կարող անգամ կանխատեսել Եգիպտոսի նման հաջողության մասին:

GEVORGIAN GOR

## THE EGYPTIAN ATTITUDE DURING THE IRAQI-KUWAITIAN CONFLICT (1990-1991)

*(Summary)*

In the years 1990-1991 during the Iraqi-Kuwaitian Conflict, the Condemnation of Iraq, and the participation of Egyptian forces with the other Arabic Countries in the International alliance against Iraq, brought many big successes to Cairo.

During the year 1991, the head quarters of the Arab League returned to Cairo and the Egyptian foreign minister Abdel Magid was elected the general secretary of the Liaque, the deputy Prime minister Boutros Boutros Gali was elected to the United Nations Organization General secretary's post. Mubarak himself was elected as the general secretary of the African Union during the years 1989-1990, then 1993-1994.

In the year 1993 he was elected as the president of Egypt for the third time. When Egypt participated in the International Coalition against Iraq, the U.S. canceled the Egyptian military dept which was 6,7 billion $ in return.

The "Paris-club" canceled the half of Egyptian dept, which counted 50 billion $.

Cairo in favor of the elastic policy of Mubarak be came again the main player in Arab Politics.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Н.О.Оганесян, Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ер., 1985, стр. 27.
2. См. В.Сычев, Пррблемы политики и новые тенденции в деятельности организации исламской конференции (ОИК), в кн. Современный ислам, М., 1985, стр. 133, а также ТАСС Атлас є 31 (1675)14.08.89, стр. 57-59.
3. Азия и Африка сегодня, є 2, М, 1992, О.Левин, Египет после войны в Заливе, стр. 12.
4. Hollstreet gournal, US, 6.08.90., ТАСС БПИ, N 32 (1726)06.08.90., стр. 55.
5. П.Кальвокоресси, Мировая политика после 1945 г., т. 1, М., 2000, стр. 551.
6. Азия и Африка сегодня, є 3, М, 1992, П.Демченко, Ближневосточный ребус, стр. 4.
7. Азия и Африка сегодня є4, М., 1994, Б.Сейранян, Звезда и жизнь диктатора, стр. 9.
8. Международная жизнь, є 1, М., 1991, Е.Пырлин, В ожидании изменений на Ближнем Востоке, стр. 104.
9. Р.Дж. Апдайк, Саддам Хусейн, Ростов на Дону, 1999, стр. 370.
10. Ալ-Իրաք, Իրաք, N 7, 1990:
11. Նույն տեղում:
12. Աս-Սիասա, Էլ-Քուվեյթ, 22.07.90:
13. Աշ-Շաարք, Իրաք 26.07.90.
14. Սանիրամասն տես՝ «Ալ-Ջումհուրիա», Իրաք, 22.04.90.

15. Д.В.Сербиненко, Предпосылки "Кризиса" и войны в заливе в кн. Арабский сборник вып. 3, М., 2000, стр. 92./ Ближний Восток и Международное право. М., 1992, стр. 111.
16. Азия и Африка сегодня, є 6, М., 1991, В.Исаев, После "Бури в пустыне", стр. 10.
17. Современные международные отношения, под ред. А.Торкунова, М., 1999, стр. 403.
18. Р.Дж. Апдайк, Саддам Хусейн, նշվ.աշխ. էջ 414.
19. Սկսած 1990 թ. հուլիսի սկզբից Մուբարաքը ակտիվ դիվանագիտական գործունեություն էր ծավալել, որպեսզի կանխարգելի իրաք-քուվեյթյան հակասությունների նման ընթացքը: Տես՝ Г.Концельман, Арафат: от террориста к человеку мира, Ростов на Дону, 1997, стр. 448-449.
20. Նույն տեղում:
21. Аль-Амри Саид Сальман, Второй кризис в заливе 1990-91гг. и его последствия, в. кн. Арабский сборник, նշվ. աշխ. էջ 54.
22. Mayo, march 04.1991, Cairo.
23. Известия, 30.11.90.
24. Ում ալ-Քուրա: Սաուդյան Արաբիա, N 6, 1991:
25. Международная жизнь, N 2, 1992 г., А.Кислов, А.Фролов, Ограничение гонки вооружений на Ближнем Востоке, стр. 96./ International affairs, L, 27.02.1991.
26. А.Васильев, Россия на Ближнем и Среднем Востоке: от мессианства к прагматизму. М., 1993, стр. 351.
27. International Affairs. L, 27.02.1991
28. Al – Ahram Weekly, 17 sept. 1992, Cairo.
29. Final Comminque of the 20 th ICFM http:// www.oic-un.org
30. P.Clawson and R.Satloff, Table of Contents two Articles on U.S.-Egypt relations, vol. 11, jul. 1998, http: // www.meria.com.
31. W. Quandt, The United States and Egypt: Wash. 1990, p. 41.
32. Agreed Joint Statement of U.S. – Egyptian Strategic Dialogue. Wash. D.C. jul. 15.98. http: // www.meria.com
33. D.Clarke U. S. Security Assistancet to Egypt and Israel: Political Untouchable? Stu Middle East Journal 51 spring 97, p. 203.
34. Letter of Invitation to Madrid Peace Conference. Oct. 30.1991. http: // www.leb.net.com /bcome/
35. Международная жизнь, N 1; 1991 г.,Е.Пырлин, նույն տեղում:
36. Е.Д. Пырлин, Ближневосточный лабиринт. М., 1996, стр. 103.
37. W.S. Kenneth, Egyption-Israeli Relatioins, Vol. 1, N. 3, Sept. 1997. Middle East Review International Affairs.
38. А.Кини, Внешняя политика арабских стран и Израилья. М., 2001, стр. 55.